«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՅՏ

(իրավաբանական անձանց համար)

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը _____

(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Բաժնետեր _____

(ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետռեգիստրի գրանցման տվյալները _____

(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման վայրի հասցեն _____

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____

(ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ)

Ձեռքբերվող բաժնետոմսերի քանակը՝ հատ _____

քանակը թվերով

Ձեռք բերվող մեկ բաժնետոմսերի տեղաբաշխման գինը[1] _____

գինը թվերով

Ձեռքբերվող բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը _____

ընդհանուր գումարը թվերով

Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը _____

Բանկի անվանումը _____

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը _____

---

[1] Բաժնետոմսի ճշգրտված գինը կհրապարակվի Բանկի կայքէջի «Բաժնետերեր և սեփականատերեր» հատվածում ոչ ուշ, քան սույն թվականի հոկտեմբերի 29-ի ժամը 21:00-ն ներառյալ: Եթե բաժնետերը Հայտը ներկայացնում է մինչև **սույն թվականի հոկտեմբերի 29-ը,** ապա բաժնետերը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 220004131649000 հաշվեհամարին ապահովում է բաժնետոմսերի ձեռքբերման գումարը՝ մեկ բաժնետոմսի առավելագույն գնի՝ 18 000 (տասնութ հազար) ՀՀ դրամի հաշվարկով:
Բանկի կողմից բաժնետոմսի գնի ճշգրտումից հետո բաժնետերը Բանկի ցանկացած մասնաճյուղից կարող է ստանալ (կանխիկ կամ անկանխիկ եղանակով) բաժնետոմսի ձեռքբերման համար իր կողմից փոխանցված առավելագույն գնի և ճշգրտված գնի տարբերությունը:
Եթե բաժնետերը Հայտը ներկայացնում է **սույն թվականի հոկտեմբերի 29-ից հետո**, ապա բաժնետերը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 220004131649000 հաշվեհամարին ապահովում է բաժնետոմսերի ձեռքբերման գումարը՝ մեկ բաժնետոմսի ճշգրտված գնի հաշվարկով:

Արժեթղթերի հաշվի համարը	
Ձեռքբերվող բաժնետոմսերի ԱՄՏԾ	AMACBAS10ER7
Բաժնետոմսերի թողարկման սերիա	**2**
Թողարկված բաժնետոմսերի ընդհանուր քանակ	**485 000** **քանակը թվերով**

Սույն հայտի ներկայացմամբ ընդունում եմ Ազդագրով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի առաջարկը, հաստատում եմ, որ ցանկանում եմ ձեռք բերել հայտում նշված պայմաններով բաժնետոմսեր և տեղեկացված եմ, որ հայտը կհամարվի հաստատված, Ազդագրում նշված բոլոր պայմանների միաժամանակ բավարարման դեպքում, իսկ բաժնետոմսերի ձեռքբերման պայմանագիրը կնքված (բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը ծագած) Կենտրոնական դեպոզիտարիայում սույն պայմանագրի գրանցման պահից:

Սույն հայտի ներկայացմամբ տալիս եմ իմ համաձայնությունը, որ Բանկն անակցեպտ կարգով գանձի բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարներն իմ՝ Բանկում ունեցած բոլոր ընթացիկ հաշիվներից՝ առաջնահերթության կարգով ՀՀ դրամով հաշիվներից, իսկ համապատասխան հաշիվներում անհրաժեշտ գումարի բացակայության կամ անբավարարության դեպքում՝ համապատասխան գումարի չափով այլ արտարժութային հաշիվներից: Այդ պարագայում համաձայն եմ, որ արտարժույթի առքն ու վաճառքը կատարվի գանձման պահին Բանկի սահմանած արտարժույթի առքի փոխարժեքով:

Հավաստում եմ, որ հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ Բաժնետոմսերի ազդագրին, ինչպես նաև սույն հայտին կից ներկայացված Տեղեկատվական թերթիկի հետ, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, համաձայն եմ, որ հայտը հաստատվի մասնակի՝ առկա բաժնետոմսերի քանակին համապատասխան և/կամ իմ կողմից կատարված վճարմանը համարժեք: Ստանձնում եմ այդ բաժնետոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում եմ, որ Ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերիս միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Լրացվում է բաժնետիրոջ կողմից

Ստորագրություն _____

Անուն-ազգանուն _____

(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ լիազորված անձի անուն-ազգանունը)

ԾԱՆՈՒՑՈՒՄ: ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՉԵՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԾԱՆՈՒՑՈՒՄ: *Սույն Տեղեկատվական թերթիկը հանդիսանում է հայտի անբաժանելի մասը: Ներդրողները պարտավոր են ծանոթանալ և ստորագրել (կնքել համապատասխանաբար) Տեղակատվական թերթիկը: Առանց ստորագրված և համապատասխան կերպով կնքված Տեղեկատվական թերթիկի ներկայացված հայտը համարվում է* ***անվավեր****: Տեղեկատվական թերթիկում զետեղված տեղեկատվության վերաբերյալ առավել մանրամասն կարելի է ծանոթանալ Թողարկողի բաժնետոմսերի Ազդագրում:*

1. **Տեղեկատվություն Թողարկողի/Տեղաբաշխողի և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին**

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ը, որի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Արամի 82-84 շենք:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ կամ Տեղաբաշխող) հետ կապի տվյալներն են՝

- Հեռ.՝ +(374)10 31 88 88,
- Ֆաքս՝ +(374)10 54 34 85,
- էլ. Փոստ՝ acba@acba.am,
- Ինտերնետային կայք՝ www.acba.am

Ցանկացած անձ Բանկի հետ կարող է կապ հաստատել, ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն վերոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով, ցանկացած բանկային աշխատանքային օրվա ընթացքում Երևանի ժամանակով ժամը 10:00-ից մինչև 16:30-ը: Բանկի հետ հաղորդակցությունը կարելի է իրականացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Բաժնետերերը, ովքեր ցանկություն կունենան ձեռք բերելու «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված բաժնետոմսերը, պետք է պատշաճ կերպով լրացնեն և Բանկ ներկայացնեն Բաժնետոմսերի ձեռքբերման/բաժանորդագրման հայտ Ազդագրով սահմանված կարգով:

Հայտը կհամարվի պատշաճ կերպով ներկայացված Բանկին.

- «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ցանկացած մասնաճյուղում հայտն առձեռն ներկայացնելու միջոցով, կամ
- «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով

Բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով հայտը պետք է ներկայացվի 01.10.2024թ. ժամը 10:00-ից մինչև 31.10.2024թ. ժամը 16:30-ն:

Բանկի մասնաճյուղերի հասցեները տեղադրված են Բանկի ինտերնետային կայքում, ինչպես նաև Բաժնետոմսերի Ազդագրի ***4.3.1*** *ենթակետում:*

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի՝ Տեղաբաշխողը կարող է մատուցել ներդրումային ծառայություններ՝ առանց ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի: Տեղաբաշխողը լիցենզավորվել և գրանցվել է որպես բանկ ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ՀՀ կենտրոնական բանկի հետ կապի տվյալներն են՝ ՀՀ ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 6, Հեռ՝ (374-10) 592 697, Ֆաքս՝ (374-10) 523 852, Էլ-փոստ՝ mcba@cba.am, S.W.I.F.T.CBRAAM22:

Բաժանորդագրության արդյունքում Տեղաբաշխողը բաժնետիրոջը կտրամադրի համապատասխան տեղեկատվություն իր կողմից ձեռքբերված բաժնետոմսերի դիմաց կատարված վճարման հաստատման, ձեռքբերված բաժնետոմսերի քանակի և ձեռքբերվող բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի պատշաճ գրանցման վերաբերյալ:

Տեղաբաշխողի կողմից «Շահերի բախման սահմանափակման քաղաքականության» համառոտ նկարագրությունը ներկայացվում է հաջորդիվ, սակայն բաժնետերերը կարող են Տեղաբաշխողի ինտերնետային կայքում ծանոթանալ քաղաքականության ամբողջական տարբերակի հետ: Քաղաքականության նպատակը ներդրումային ծառայություններ մատուցելիս հնարավոր շահերի բախումների սահմանումն է և դրանց կանխարգելման ուղղությամբ տեղաբաշխողի կողմից իրականացվող միջոցառումների նկարագրությունը:

Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Բանկը գործում է՝ ելնելով բացառապես հաճախորդի շահերի պաշտպանությունից և ներդրումային ծառայություններ է մատուցում անկողմնակալության, ճշտապահության, բարեխղճության, արհեստավարժության սկզբունքներով: Վերոհիշյալ շահերի պաշտպանման նպատակով Բանկի համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Բանկի ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական էթիկայի կանոնները,
- չիրականացնել Հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնց վերջնական նպատակն է Բանկի կողմից տվյալ Հաճախորդից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ուռճացումը,
- հաճախորդի շահերը համարել գերակա Բանկի և Բանկի աշխատակիցների շահերի նկատմամբ՝ Հաճախորդի Հանձնարարականի համաձայն գործարքներ կնքելիս շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու ժամանակ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ: ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՉԵՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ:

2. Տեղեկատվություն բաժնետոմսերի և դրանց հետ առնչվող ռիսկերի մասին

Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը:

Թողարկողի բաժնետոմսերում ներդրումների հետ կապված որպես էական ռիսկեր դիտարկվում են հետևյալ ռիսկերը, որոնք բաժանվում են երկու մեծ խմբի՝ Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկեր և Թողարկողի բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկեր:

2.1 Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկեր

- ***Վարկային ռիսկը,*** իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկը, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ, որն ազդում է վերջինիս գործունեության վրա, առաջացնում լրացուցիչ ծախսեր և բացասական անդրադառնում շահույթի վրա:
- ***Իրացվելիության ռիսկն*** այն ռիսկն է, որ Բանկը չի ունենա բավարար իրացվելիություն սահմանված ժամկետներում ստանձնած պարտավորությունների դիմաց վճարում կատարելու համար:
- ***Տոկոսադրույքի ռիսկը*** շուկայում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններով պայմանավորված բանկի կողմից կորուստ կրելու հավանականությունն է:
- ***Արտարժութային ռիսկը*** հավանականություն է, որ արժույթի փոխարժեքի տատանումները բացասական ազդեցություն կունենան բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա:
- ***Գնային ռիսկը*** նյութական ակտիվների (գույք, գրավ) գների փոփոխության արդյունքում Բանկի կորստի ռիսկն է:
- ***Գործառնական ռիսկը*** աշխատակիցների գործողությունների սխալների, տեխնիկական անսարքության և խարդախությունների հետևանքով Բանկի մոտ առաջացող միջոցների կորստի հավանականությունն է:
- ***Օրենսդրական և նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկը*** բանկային գործունեությանը վերաբերող իրավական և օրենդրական դաշտի անբարենպաստ կամ անցանկալի փոփոխությունների, պայմանագրերում առկա հակասական դրույթների և այլ նմանատիպ հանգամանքների հետևանքով կորուստներ կրելու հավանականությունն է:
- ***Համբավի ռիսկը*** հավանականությունն է, որ Բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքը կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազմանը, կոնտրագենտների/հաճախորդների հետ իրականացվող գործառնությունների ծավալի կրճատմանը, ծախսատար դատական գործընթացների և եկամտաբերության անկմանը: Այս առումով Բանկը բարձր է գնահատում իր բարի համբավը և գործադրում լավագույն ջանքեր Բանկի հեղինակության պահպանման ուղղությամբ:
- ***Անհամապատասխանության (non-compliance) ռիսկը*** Բանկի հանդեպ իրավական, վարչական կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման, էական ֆինանսական կորուստների և համբավին սպառնացող վտանգի ռիսկն է:
- ***Երկրի ռիսկը*** հավանականությունն է, որ երկրում տեղի ունեցող տնտեսական, սոցիալական և (կամ) քաղաքական պայմանները կամ իրադարձությունները բացասական ազդեցություն կունենան բանկի ռիսկի պրոֆիլի, իրացվելիության, կապիտալի և (կամ) շահույթի վրա:
- ***Մրցակցային պայմանների ռիսկը*** շուկայում մրցակից բանկերի կողմից առավել բարենպաստ պայմաններով նույնանման ծառայությունների մատուցման հետ կապված Բանկի պոտենցիալ եկամուտները կորցնելու հավանականությունն է:

2.2 Թողարկողի բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկեր

- ***Բիզնես ռիսկը,*** որը կարող է առաջանալ ընդհանուր տնտեսական վիճակի, բանկային ծառայությունների ոլորտի կամ Բանկի մրցակցային դիրքի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, որի արդյունքում կարող է նվազել Բանկի շահույթը՝ հանգեցնելով բաժնետոմսերի գնի անկման:
- ***Իրացվելիության ռիսկ,* որը** կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության, Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով, որի արդյունքում բաժնետոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը՝ հանգեցնելով դրանց գնի անկմանը: Արդյունքում բաժնետոմսերում բաժնետերը ցանկացած պահի չի կարողանում իր համար շահավետ գնով արագ իրացնել բաժնետոմսերը և հետևաբար կրում է ֆինանսական կորուստներ՝ ստիպված լինելով դրանք վաճառել ավելի ցածր գնով:
- ***Տոկոսադրույքի ռիսկ,* որը** կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, ինչը, որպես այլընտրանքային ներդրման ուղղություն, անուղղակիորեն ազդում է բաժնետոմսերի գների վրա:
- ***Արտարժութային ռիսկն*** ի հայտ է գալիս փոխարժեքների տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա: Բաժնետոմսերը գնանշվելու և վճարվելու են ՀՀ դրամով, ուստի, այն բաժնետերերիհամար, որոնց ֆինանսական հոսքերն այլ արժույթով են, տվյալ բաժնետոմսերը պարունակում են զգալի արտարժութային ռիսկեր:
- ***Բանկի համբավի ռիսկն*** անմիջական ազդեցություն ունի բաժնետոմսերի գրավչության և գնի վրա:

2.3 Տեղեկատվություն հրապարակված ազդագրի մասին

Բաժնետերը Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային եղանակով կարող է ձեռք բերել Բանկի կենտրոնական գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ **www.acba.am:**

2.4 Տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորի մասին

Բաժնետոմսերում կատարվող ներդրումները երաշխավորված չեն Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

ԾԱՆՈՒՑՈՒՄ: ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՉԵՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ:

3. Գործարքի կնքման վայրը

Գործարքի կնքման վայր է համարվում Բանկի գործունեության իրավաբանական հասցեն:

4. Տեղեկատվություն ծախսերի և միջնորդավճարների մասին

4.1 Բաժնետոմսերի դիմաց վճարումը

Բաժնետերերը բաժնետոմսի դիմաց կատարում են վճարումներ համաձայն Թողարկողի կողմից հաստատված բաժնետոմսերի թողարկման պայմանների:

Բաժնետոմսի գինը հաշվարկվել է՝ հաշվի առնելով Բանկի զուտ ակտիվների արժեքը, բաժնետոմսերի առաջարկի և պահանջարկի գինը, ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը, ինչպես նաև 1 բաժնետոմսի միջին կշռված շուկայական գինը վերջին վեց ամիսների ընթացքում:

Քանի որ Առաջարկն ուղղված է Պրոպարկո ընկերությանը, որը հանդիսանում է ոչ ռեզիդենտ կազմակերպություն,վերջինիս համար ՀՀ դրամով ներդրումը առաջացնում է արտարժութային ռիսկեր: Ելնելով այն հանգամանքից, որ Ազդագրի գրանցման օրվա և բաժանորդագրության օրվա միջև առկա է տևական ժամանակահատված՝ նախատեսվել է փոխարժեքի տատանմամբ պայմանավորված արժեթղթերի գնի ճշգրտման դրույթ: Հաշվի առնելով, որ Բանկի բաժնետերերը տեղաբաշխվող բաժնետոմսերի նկատմամբ ունեն ձեռքբերման նախապատվության իրավունք՝ բաժնետոմսերը նախքան Պրոպարկոյին առաջարկելը այդ նույն գնով առաջարկվում են Բանկի բաժնետերերին:

Ընդհանուր տեղեկություններ ծախսերի և միջնորդավճարների մասին

Տեղաբաշխման ընթացքում ներդրողները կարող են ունենալ հետևյալ ծախսերը՝

- որևէ առևտրային բանկում բանկային հաշվի բացման հետ կապված ծախսեր՝ համաձայն յուրաքանչյուր առևտրային բանկի գործող սակագների,
- «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուների մոտ արժեթղթերի հաշվի բացման հետ կապված ծախսեր՝ համաձայն յուրաքանչյուր պահառուի գործող սակագների,
- Հայտի՝ առձեռն ներկայացնելու հետ կապված ծախսեր,
- Հայտի բավարարման արդյունքում թողարկված արժեթղթերի ձեռքբերման և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ամրագրման հետ կապված ծախսեր: Մասնավորապես՝
    - ձեռքբերվող բաժնետոմսերի համար Թողարկողի բանկային հաշվին ներդրողի բանկային հաշվից համապատասխան գումարի փոխանցման հետ կապված բանկային ծախսեր՝ համաձայն սպասարկող առևտրային բանկի գործող սակագների,
    - ձեռքբերվող բաժնետոմսերի համար արժեթղթերի փոխանցման հետ կապված պահառուի ծախսեր՝ համաձայն սպասարկող պահառուի գործող սակագների:

Բաժնետերերը շահութաբաժինների ստացման, ինչպես նաև բաժնետոմսերի առքուվաճառի գործարքների իրականացման արդյունքում կարող են ունենալ նաև հարկային ծախսեր՝ համաձայն իրենց՝ որպես հարկ վճարողի կարգավիճակի (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ, գործող հարկային արտոնությունների առկայություն և այլն): Հետևաբար հնարավոր է, որ Թողարկողը՝ հանդես գալով որպես հարկային գործակալ, իրականացնի օրենսդրությամբ նախատեսված որոշակի հարկային պահումներ: Բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկման առավել մանրամասն նկարագրությունը ներկայացված է բաժնետոմսերի ազդագրում:

4.2 «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից առաջարկվող ծառայությունները

Տեղաբաշխման ընթացքում բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գործողությունների հետ կապված «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից առաջարկվող ծառայությունները ներկայացվում են ստորև՝

- բանկային հաշվի բացում՝ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ գործող սակագների,
- բանկային հաշվին բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ կանխիկ միջոցների մուտքագրում՝ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ գործող սակագների,
- արժեթղթերի հաշվի բացում՝ համաձայն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ գործող սակագների:

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____

ԾԱՆՈՒՑՈՒՄ: ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՉԵՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ: